փաստաթղթերը Դատարան են ներկայացվել էլեկտրոնային համակարգի միջոցով, գործը քննվել է գրավոր ընթացակարգով, դատական նիստերին մասնակցելու անհրաժեշտություն չի եղել, ուստի՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 100.000 ՀՀ դրամը, հետևաբար, Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2024-30» ծածկագրով «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերը 1-ին չափաբաժնի մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2024-30» ծածկագրով «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերը՝ 1-ին չափաբաժնի մասով:

3. «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերությունից հօգուտ <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերության բռնագանձել 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերությունից հօգուտ <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

5. Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

8. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԹՈՒՄԱՍՅԱՆ**